ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-21/1-1

ք. Երևան «15» հունվարի 2021 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Նիկողոսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի** կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 և N 1.1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և N 1.1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **1 000 000 (Մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

1-ին չափաբաժնի համար 5 880 000 (հինգ միլիոն ութ հարյուր ութանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժնի համար 5 200 000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

1-ին չափաբաժնի համար 18 665 100 (տասնութ միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժնի համար 16 785 100 (տասնվեց միլիոն յոթ հարյուր ութանասունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.16 Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ 02505554 (ստորագրություն) Կ.Տ.	«Գարանտսերվիս» ՍՊԸ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20 ՀՎՀՀ 00840437 Կոնվերսբանկ ՓԲԸ h/h 193004674290 Տնօրեն՝ ---------- Մ.Նիկողոսյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 15 » հունվարի 2021 թ. կնքված
ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	50111130/600	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ / TOYOTA COROLLA 2015թ. TOYOTACOROLLA 2014թ./՝ համաձայն հավելված N1.1	դրամ	650 000	1	Ք.Երևան, ծառայությունը մատուցողի նշված հասցեում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջմտնելուց մինչև 2021թ. դեկտեմբերի 25-ը
2	50111130/601	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ / TOYOTA CAMRY 2010թ../՝ համաձայն հավելված N1.1	դրամ	350 000	1		

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ
ՀՎՀՀ 02505554

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
ՀՎՀՀ 00840437
Կոնվերսբանկ ՓԲԸ
հ/հ 193004674290

Տնօրեն՝ _____ Մ.Նիկողոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
« 15 » հունվարի 2021 թ. կնքված
ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-Գնացուցակ*

ՀՀ դրամ

N/N	**SU-1 և SU-2 ծառայությունների, պահեստամասերի և օգտագործվող նյութերի անվանումները**	**TOYOTA COROLLA 2015թ. (Նույնականացման համարը՝ NMTBBOJELOR109459) T OYOTACOROLLA 2014թ. (Նույնականացման համարը՝ NMTBB4JE70R050801)**	**TOYOTA CAMRY 2010թ. (Նույնականացման համարը՝ JTHBE40K303203820)**
1	Բռնկման համակարգի ստուգում	1418	1239
2	Սառեցման համակարգի ստուգում	1418	1239
3	Յուղման համակարգի ստուգում	1260	1084
4	Արտացման համակարգի ստուգում	1575	1394
5	Կցորդման համակարգի ստուգում	1575	1394
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	1575	1394
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1575	1394
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	1260	1084
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1575	1394
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1260	1084
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	1575	1394
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	1260	1084
13	ABS համակարգի ստուգում	1575	1394
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3150	2788
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	2835	2478
16	Թափքի վիճակի ստուգում	1260	1239
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	945	929
18	**SU-2 ներառվող ծառայությունների անվանումը**		
19	Շարժիչի հանում և տեղադրում	25202	22305
20	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	28352	25094
21	Նույնը կոնդիցիոների դեպքում	28352	25094

22	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	28352	25094
23	Շարժիչի վերանորոգում	78757	69705
24	Նույնը DOHC դեպքում	88207	78069
25	Նույնը V6-ի դեպքում	94508	83646
26	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	1890	1673
27	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	3150	2788
28	Նույնը աջի համար (V6)	3150	2788
29	Նույնը ձախի համար (V6)	3150	2788
30	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	18902	16729
31	Նույնը աջի համար (V6)	18902	16729
32	Նույնը ձախի համար (V6)	18902	16729
33	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	18902	16729
34	Շարժիչի գլխիկի վերանորոգում	18902	16729
35	Փականի խցուկի փոխարինում	7876	6970
36	Նույնը V6-ի դեպքում	12601	11153
37	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	3150	2788
38	Նույնը V6-ի ձախի դեպքում	3150	2788
39	Նույնը V6-ի աջի դեպքում	3150	2788
40	Նույնը DOHC դեպքում	3150	2788
41	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	4725	4182
42	Հրիչների փոխարինում SOHC	1575	1394
43	Նույնը DOHC դեպքում	1575	1394
44	Ատամնավոր փոկի փոխարինում	12601	11153
45	Նույնը DOHC դեպքում	12601	11153
46	Նույնը V6-ի դեպքում	12601	11153
47	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	4725	4182
48	Նույնը կոնդիցիոների դեպքում	6301	5576
49	Նույնը DOHC դեպքում	6301	5576
50	Նույնը V6-ի դեպքում	6301	5576
51	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	8821	7745

52	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	15751	13941
53	Մխոցային օղակների փոխարինում	12601	11153
54	Նույնը DOHC դեպքում	12601	11153
55	Նույնը V6-ի դեպքում	12601	11153
56	Թափանիվի հանում և տեղադրում	12601	11153
57	**2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ**		0
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	158	139
59	Յուղի պոմպի փոխարինում	5670	4647
60	Նույնը DOHC դեպքում	5670	4647
61	Նույնը V6-ի դեպքում	5670	4647
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	15751	13941
63	Բռնկման կարգավորում	1575	1394
64	CO կարգավորում	945	836
65	Օդի զտիչի փոխարինում	158	139
66	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	315	279
67	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	2835	2788
68	Բենզամղիչի փոխարինում	1890	1673
69	Վառելիքի զտիչի փոխարինում	1575	1549
70	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	3150	2788
71	**3. Սառեցման և արտածման համակարգ**		
72	Հովհարի փոկի հանում և տեղադրում	1260	1115
73	Հովհարի հանում և տեղադրում	5670	5267
74	Ռադիատորի հանում և տեղադրում	3150	3098
75	Նույնը կոնդիցիոների դեպքում	3150	3098
76	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	3150	3098
77	Ռադիատորի վերանորոգում	18902	16729
78	Թերմոստատի փոխարինում	2520	2231
79	Ջրի պոմպի փոխարինում	9451	8365
80	Նույնը DOHC և V-6 դեպքում	9451	8365
81	Նույնը կոնդիցիոների դեպքում	9451	8365

82	Խլարարի հանում և տեղադրում	945	836
83	Նույնը DOHC դեպքում	2520	2231
84	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	630	558
85	**4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ**		
86	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	1890	1673
87	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	1890	1673
88	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	12601	11153
89	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	945	836
90	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	945	836
91	ՓՏ-ի հանում և տեղադրում	12601	11153
92	ՓՏ-ի վերանորոգում	15751	13941
93	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	315	279
94	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	12601	11153
95	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	1575	1394
96	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	12601	11153
97	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	18902	16729
98	Նույնը V6-ի համար	18902	16729
99	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	25202	22305
100	Նույնը V6-ի համար	25202	22305
101	ԱՓՏ-ի վերանորոգում	63005	55764
102	Նույնը V6-ի համար	63005	55764
103	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	4725	4182
104	**7. Կախոց**		
105	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	15751	13941
106	Տրավերսի հանում և տեղադրում	9451	8365
107	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	2520	2231
108	Անվակունդի առանցքակալի փոխարինում	3780	3346
109	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	3780	3346
110	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	3780	3346
111	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	3780	3346

112	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	1575	1549
113	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	1575	1549
114	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1890	1673
115	Զսպանակի հանում և տեղադրում	1890	1673
116	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2205	1952
117	Ներքևի լծակի հանում և տեղադրում	3780	3346
118	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1260	1115
119	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	2520	1952
120	Վերևի լծակի հանում և տեղադրում	3780	3346
121	Վերևի լծակի վռանների փոխարինում	945	836
122	Գնդե հոդակապերի փոխարինում	1890	1673
123	Ծայրակաների հանում և տեղադրում	2205	1952
124	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	1890	1704
125	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1260	1115
126	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1260	1115
127	Հետևի զսպանակի փոխարինում	1890	1673
128	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2205	1952
129	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	3780	3346
130	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	3780	3346
131	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	1260	1115
132	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	3780	3346
133	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	1260	1115
134	Անվաբացքի կարագավորում	2520	2169
135	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	630	558
136	**8. Ղեկային մեխանիզմ**		
137	Ղեկային կալունի հանում և տեղադրում	11026	9759
138	Նույնը V6-ի համար	11026	9759

139	Ղեկային կալունի վերանորոգում	15751	13941
140	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	3150	2788
141	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	3150	2788
142	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	4725	4182
143	Նույնը DOHC դեպքում	4725	4182
144	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	945	836
145	Նույնը DOHC դեպքում	945	836
146	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	1890	1673
147	Նույնը DOHC դեպքում	1890	1673
148	Նույնը կոնդիցիոների դեպքում	1890	1673
149	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	4725	4182
150	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	12601	11153
151	**9. Արգելակային համակարգ**		
152	Գլխ. գլանի հանում և տեղադրում	2520	2231
153	Գլխ. գլանի վերանորոգում	2520	2231
154	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	3150	2788
155	Բանվ. գլանի հանում և տեղադրում	2520	2231
156	Բանվ. գլանի վերանորոգում	2520	2231
157	Արգելակային համակարգի օդահանում	945	836
158	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	1890	1673
159	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	1890	1673
160	Առջևի սուպպորտի վերանորոգում	3150	2788
161	Հետևի սուպպորտի վերանորոգում	3150	2788
162	Արգելակային փողրակի փոխարինում	1260	1115
163	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	1575	1394
164	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	1575	1394